Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Հանրային ծառայողի անունը, ազգանունը.**
   Լիանա Ղահրամանյան, Իրինա Ավագյան, Արամ Սայադյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու, շրջակա միջավայրի նախարարության մթնոլորտային քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Լեհաստանի Հանրապետություն (ք. Վարշավա)՝ 2023 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 2-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի Օզոնէքշն մասնաճյուղը (OzonAction):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Միավորված ազգերի կազմակերպության շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) Եվրոպայի գրասենյակի կողմից կազմակերպված սառնարանների և օդորակիչների ուտիլիզացիոն կենտրոնի ուսումնասիրության նպատակով ուսումնական այցին:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   1. Լեհաստանում գործող «PROZON» հիմնադրամի գործունեությունը և դրա կողմից մատուցվող սառնագենտների արտազատման ծառայությունները, լաբորատոր փորձաքննության ծառայությունները, կազմակերպվող վերապատրաստման դասընթացները, համագործակցությունը Լեհաստանի պետական այլ մարմինների հետ:
   2. Լեհաստանում գործող «Արտազատում/Վերաշրջանառություն/Վերականգնում» համակարգ և այդ համակարգն ապահովող օրենսդրական շրջանակներ:
   3. ԵՄ Կանոնակարգ 517/2014

4. Լեհաստանի 2015 թվականի մայիսի 15-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի և որոշակի ֆտորացված ջերմոցային գազերի մասին» ակտը: https://www.udt.gov.pl/przepisy/szwo-i-f-gazy
5. Լեհաստանի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի «Թափոնների մասին» ակտը: https://isap.sejm.gov.pl/isap.nsf/DocDetails.xsp?id=wdu20130000021
6. Լեհաստանի թափոնների տվյալների «BDO» կարգավորումներն https://isap.sejm.gov.pl/isap.nsf/DocDetails.xsp?id=WDU20200001071 ու բազա https://bdo.mos.gov.pl/:
7. Շրջանաձև տնտեսության մոդելի կիրառում էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների կրկնօգտագործման նպատակով:

## 7. Հանդիպումները, ելույթները.

Գործուղման շրջանակներում (ս.թ. նոյեմբերի 28-ից 30-ը) այցելել ենք ստորև նշված ձեռնարկություններն ու հանդիպել ձեռնարկության ղեկավարների և աշխատակիցների հետ.

1. PROZON Foundation
   Matuszewska 14 Builing B9
   03-976 Warsaw
2. PROZON Foundation
   Grabce
3. Tesla Recycling Sp. z o.o.
   ul. Traugutta 42
   05-825 Grodzisk Mazowiecki
   NIP 529-17-79-484
4. PRZETWARZAJ.PL SP. O.O.
   ul. Mokra 7h
   32-005 Niepołomice
   NIP 683-20-91-370








**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ժամանակ լեհական կողմի ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն Լեհաստանի՝ 3 կգ-ից ավել սառնագենտ պարունակող սարքավորումների օպերատորների էլեկտրոնային բազայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մասին:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ դիտարկումները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Առաջարկում ենք.

- Ուսումնասիրել Լեհաստանի՝ 3 կգ-ից ավել սառնագենտ պարունակող սարքավորումների օպերատորների էլեկտրոնային բազայի վերաբերյալ տեղեկատվությունը՝ Հայաստանում նմանատիպ բազա ստեղծելու նպատակով:
- «Թափոնների մասին» օրենքում և ենթաօրենսդրական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների, այդ թվում սառնարանային և օդորակման սարքավորումների թափոնների գործածության կանոնակարգմանը:
- Ուսումնասիրել Հայաստանում նմանատիպ «Արտազատում/Վերաշրջանառություն/Վերականգնում» համակարգ և դրա իրագործումն ապահովող օրենսդրական դաշտ ստեղծելու հնարավորությունը:

*Գործուղվողներ՝* *Լիանա Ղահրամանյան*

*Իրինա Ավագյան*

*Արամ Սայադյան*

*06.12.2023թ.*